# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Յունիսի 5-ին, կիրակի. - Գ. կիր. զկնի Հոգեգալստեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մոմիկ վարդապետ Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Յունիսի 12-ին, կիրակի. - Դ. կիր. զկնի Հոգեգալստեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մուշեղ աբեղա Բաբայանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Ընտրեցէք այսօր թէ զո՛ պաշտիցէք» (Յեսու ԻԴ 15) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 62):

***Յունիսի 18-ին, շաբաթ. - Սրբոցն Տրդատայ թագաւորին մերոյ եւ Աշխէնի տիկնոջն եւ Խոսրովիդխտոյն:***

Այսօր Մայր Աթոռի·Բաց Խորանի վրա Ս. Պատարագ մատուցեց Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Տեր Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Յունիսի 19-ին, կիրակի. - Ե. կիր. զկնի Հոգեգալստեան: Գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Նմանեցաւ արքայութիւնն երկնից առն՝ որ սերմանիցէ սերմն բարի յագարակի իւրում» (Մատթ. ԺԳ 24) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 65):

Հավարտ Ս. Պատարագի, հանդիսապետությամբ Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի, կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

***Յունիսի 26-ին, կիրակի. - Զ. կիր. զկնի Հոգեգալստեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թադեոս վարդապետ Զիրեկյանցը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց: